ՏԱՐԱԾՔԻ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀՍՆ-ՄԱ-18/ԾՁԲ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
04/04/2018թ. երկու հազար տասնութ թվականի ապրիլի չորսին

ՀՀ սփյուռքի նախարարությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3 (երեք)) ի դեմս աշխատակազմի ղեկավար **ՖԻՐԴՈՒՍ ԱՐՍԵՆԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ**, ծնված՝ 15/09/1959թ-ին, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վարձակալ), որի անունից լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ՝ **ԲԵՆԻԱՄԻՆ ԴԱՎԹԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ** ծնված՝ 12/05/1987թ-ին, ՀԾՀ՝ 2205870483, նույնականացման քարտ՝ 003075108, տրված՝ 012-ի կողմից, 12/05/2014թ-ին, հաշվառված՝ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ ՓՈՂՈՑ, 32 (ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ) ՇԵՆՔ, 14-15 (ՏԱՍՆՉՈՐՍ ԳԻԾ ՏԱՍՆՀԻՆԳ) ԱՐՎԵՍ, (լիազորագիր 18/ՁՏ/1, տրված՝ 23.03.2018թ.) , մի կողմից,

և **«ԶԱՆԳԱԿ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը**, գրանցման համար՝ 282.110.02933, գրանցման ամսաթիվ՝ 1997-10-01, ՀՎՀՀ՝ 00830786, գտնվելու վայրը՝ Ն/Ձ 8 (ութ) 30 (երեսուն) շենք 39 (երեսունինը) / Երևան 0059 ՀԱՅԱՍՏԱՆ, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն **ՍՈԿՐԱՏ ՇԱՀՈՒՄԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ**, ծնված՝ 25/10/1957թ., որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վարձատու), որի անունից լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ՝ **ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ,** ծնված՝ 23/05/1963թ-ին, ՀԾՀ՝ 3305630140, անձնագիր՝ AP0623348, տրված՝ 019-ի կողմից, 10/11/2016թ-ին, հաշվառված՝ ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ, ՍԱՐԱԼԱՆՋ ՓՈՂՈՑ, 14 (ՏԱՍՆՉՈՐՍ) ՇԵՆՔ, 19 (ՏԱՍՆԻՆԸ) ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, (լիազորագիր տրված՝ 03.04.2018թ.) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ոչ բնակելի տարածք (ներ), որը տեղակայված է քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կոմիտաս 49/2 (քառասունինը կոտորակ երկու), հասցեում՝ (այսուհետև՝ «Օբյեկտ»), իր կանոնադրությանը համապատասխան գործունեություն իրականացնելու համար: Ենթավարձակալության հանձնվող տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 106.4 (մեկ հարյուր վեց ամբողջ չորս) քառակուսի մետր՝ հատակագիծը կցվում է և հանդիսանում է սույն պայմանագրի բաղկացուցիչ մասը:

1.2 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 2018թ. հունվարի 1-ից (երկու հազար տասնութ թվականի հունվարի մեկից) ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև «31» դեկտեմբերի 2018 թվականը (երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի երեսունմեկը):

1.3 Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում Վարձատուն կորցնում է Օբյեկտից օգտվելու իրավունքը:

1.4 Սույն պայմանագրի գործողության ընթացքում Օբյեկտի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.5 Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը վաճառված, գրավ դրված ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, համաձայն՝ 2018 թվականի մարտի 22-ի N ՄՏ-22032018-01-0036 միասնական տեղեկանքի:

1.6 Վարձատուն Օբյեկտը վարձակալության է հանձնել Վարձակալին 2018 թվականի հունվարի 1-ից:

1.7 Օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծարելու կամ փոխարինելու:

1.8 Օբյեկտի վարձակալության հանձնելը հիմք չէ դրա նկատմամբ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1 պահանջել Վարձակալից Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2 Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.

2.1.3 եթե Վարձակալը Օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1 Օբյեկտը Վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով

2.2.2 իրեն հայտնի դառնալու պես, Վարձակալին անհապաղ գրավոր տեղեկացնել Նոտարին ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված Օբյեկտի հիմնական վերանորոգման կամ քարտաշխատանքի նկատառումներով քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ:

2.2.3 Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում՝ դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով:

2.2.4 իր հաշվին կատարել Օբյեկտի հիմնական վերանորոգումը.

2.2.5 Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին.

2.2.6 Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Օբյեկտի թերությունները կամ համաչափ իջեցնել վարձավճարը.

2.2.8. իր հաշվին կատարել սույն պայմանագրի նոտարական վավերացման և վարձակալությանն հանձնված Օբյեկտի գրանցման հետ կապված ծախսերը.

2.3 Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1 պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 2.2.1 կետով սահմանված ժամկետում իրեն տրամադրելու Օբյեկտը, նրա պատկանելիքներով ու փաստաթղթերով.

2.3.2 Օբյեկտի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3 Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Օբյեկտի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Օբյեկտի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.4 սույն պայմանագրի 2.2.4 կետում նշված Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.4.1 կատարել անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը.

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1.Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան.

2.4.2. ժամանակին մուծել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 4-րդ կետում սահմանված վճարը /վարձավճարը/

2.4.3 Օբյեկտի պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Օբյեկտի պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.

2.4.4.Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Օբյեկտն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը

2.4.5. Վարձակալած տարածքներում պահպանել սանիտարա-հակահամաճարային, հակահրդեհային պահանջները, ինչպես նաև այն կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու իր վարձակալած Օբյեկտի նկատմամբ.

2.4.6. Վարձատուին անմիջապես տեղեկացնել Օբյեկտի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Օբյեկտին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև Օբյեկտը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ.

2.4.7. Առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել պայմանագրեր և չմտնել Օբյեկտի հետ կապված գործարքների մեջ: Առանց նշված համաձայնության՝ Վարձակալի կողմից նման պայմանագրեր կնքելը կամ նման գործարքներ կատարելը պայմանագրի միակողմանիորեն լուծելու հիմք է.

2.4.8. Ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Օբյեկտի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ.

2.4.9. Օբյեկտն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.

2.4.9.1 սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգի տակ են դնում Օբյեկտը, իսկ վարձակալված Օբյեկտից դուրս՝ բնապահպանական և սանիտարական իրավիճակը:

3. Հանձնման-ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Վարձակալի և Վարձատուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Վարձակալին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ավարտի օրը ներառյալ Վարձատուն Վարձակալին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման

5.8 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.8.1 Տուգանքի և (կամ) տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Վարձակալած Օբյեկտի բարելավումները

6.1 Վարձակալած Օբյեկտից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

6.2 Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով, որը որոշվում է փոխհամաձայնությամբ:

7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

7.1 Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատական կարգով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

7.1.1 Օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

7.1.2 էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը.

7.1.3 սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Օբյեկտի ընթացիկ վերանորոգումը:

7.2 Վարձակալի պահանջով՝ սույն պայմանագիրը կարող է դատական կարգով վաղաժամկետ լուծվել, եթե՝

7.2.1 Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Օբյեկտը կամ խոչընդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

7.2.2 Վարձակալին հանձնված Օբյեկտն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս:

7.2.3 Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Օբյեկտը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

8. Այլ պայմաններ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 2018թ հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, ինչը չի առարկում «Տաթև գիտակրթական համալիր» ՍՊԸ-ն (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Կոմիտաս 49/2), (այսուհետև՝ Օբյեկտի Սեփականատեր), ի դեմս ընկերության տնօրեն Սոկրատ Մկրտչյանի՝ համաձայն 23.03.2015 թ. թիվ 23032015-01-0169 Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ՀՀ վկայականի, որի «Օբյեկտը» հանձնվել է վարձակալության 2015 թվականի հուլիսի 29-ին «Զանգակ-97» ՍՊԸ-ին, (այսուհետև՝ Վարձակալ), (գտնվելու հասցեն՝ ք. Երևան, Կոմիտաս 49/2), ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Սոկրատ Մկրտչյանի::

8.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.4 Սույն պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Վարձակալի մոտ չի վերացել պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.5 Օբյեկտի վրա արտաքին գովազդի և տեղեկատվության օբյեկտների տեղադրումն իրականացնում է Վարձակալը կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքած անձը՝ առանց Վարձատուի համաձայնության:

8.6 Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

8.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Վարձակալն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Վարձակալի ստացածով:

8.8 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վարձակալ կամ Վարձատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վարձատուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել
պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վարձատուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9.1 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.9.2 Սույն պայմանագիրը կազմված է **5 (հինգ)** էջից և N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածներից, որոնք հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը: Սույն պայմանագիրը կնքված և վավերացված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկը պահվում է նոտարի գործերում, մյուս օրինակները տրվում են կողմերին:

9. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՎԱՐՁԱԿԱԼ	ՎԱՐՁԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն	«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Կոմիտաս 49/2
ՖՆ Գործառնական վարչություն	«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ 900011000107	ՀՀ 217001-0040013-001
ՀՎՀՀ 02705838	ՀՎՀՀ00830786
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«05» «05» 2018թ. կնքված ՀՀՄՆ-ՄԱ-18/ԾՁԲ
ծածկագրով կարածքի ենթավարձակալության պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄ	
						հասցեն	Ժամկետը**
1	70221100/1	տարածքը կազմում է 106.4 (մեկ հարյուր վեց ամբողջ չորս) քառակուսի մետր՝ խոնավությունից պաշտպանված, լուսավոր պահեստային տարածք՝ ք.Երևան,Կոմիտաս 49/2	դրամ	999990	1	ք.Երևան Վ.Սարգսյան 3 ՀՀ սփյուռքի նախարարություն	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նշված մինչև 2018թ դեկտեմբերի 25-ը

ՎԱՐՁԱԿԱԼ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան Վ. Սարգսյան 3
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011000107
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՐՁԱՏՈՒ
«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001-0040013-001
ՀՎՀՀ00830786

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«04» «04» 2018թ. կնքված ՀՀՄՆ-ՄԱ-18/ԾՁԲ
ծածկագրով տարածքի ենթավարձակալության պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	70221100/1	տարածքի ենթավարձակալության				111110	222220	333330	444440	555550	666660	777770	888880	999990	999990

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՎԱՐՁԱԿԱԼ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան Վ. Սարգսյան 3
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011000107
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՐՁԱՏՈՒ
«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001-0040013-001
ՀՎՀՀ00830786

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » « » 2018թ. կնքված ՀՀՄՆ-ՄԱ-18/ԾՁԲ
ծածկագրով փարաձքի ենթավարձակալության պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » « » 2018թ. կնքված ՀՀՄՆ-ՄԱ-18/ԾՁԲ
ծածկագրով փարածքի ենթավարձակալության պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Նոտարական ակտի կոդ: 510-20180403-37-2384561
Նոտարական ակտի գաղտնագիր: WQSO9A

Երկու հազար տասնութ թվականի ապրիլի չորսին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Վանինե Ժորայի Հովսեփյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած ֆիզիկական անձանց ինքնությունը պարզված է, նրանց գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորություններն, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ Վարձատուի իրավունքները՝ ստուգված:
ՀՀ քաղաքացիական օրենքի 611 հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ԱԳԿՊԿԱՏ ստորաբաժանումում՝ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

ԳՐԱՆՑՎԱԾ Է ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ՝ 901-ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վանինե Ժորայի Հովսեփյան

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի
2011թ. հոկտեմբերի 20-ի N 284-Ն հրամանի

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

<< ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ >> ՍՊԸ
Անուն, ազգանուն, (անվանում)

Մարզ Երևան Համայնք Արաբկիր Հասցե Կոմիտասի պող. թիվ հ. 49/2

Մասշտաբ 1:200



Կատարող (ստորագրություն) Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (Անուն,ազգանուն) «19» 03 2013 (տրման ամիս,ամսաթիվ)

Որակավորման վկայականի համարը 0288 տրման ամիս, ամսաթիվը 23.08.2013թ.

Իրավաբանական անձի (պետական գրանցման համարը) 01 Ա 932263 «ՀԱՄՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» Ա/Ձ (անվանումը)